# ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊ» ԱՄՍԱԳՐՈՒՄ *(1840-ական թվականներ)**

***ՀՏԴ: 37.012+070***
***DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-141***

**ՀՈՎԱԿԻՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**
***Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան***

***ORCID: 0009-0009-5048-2232***

*Դաստիարակության խնդիրը հասարակությանը հուզող կարևորագույն խնդիրներից է եղել միշտ, քանի որ այն ապագա կերտելու գործիքներից մեկն է: Սույն հոդվածով անդրադառնալու ենք դաստիարակության խնդիրներին պատմական կտրվածքով՝ դիտարկելով այն «Բազմավէպ» հանդեսում տպագրված նյութերի շրջանակում: Քանի որ «Բազմավէպ»-ն ամենաերկարակյաց ամսագրերից է հայ իրականության մեջ, մեզ հուզող թեման սահմանափակելու ենք 1840-ական թվականների տպագիր նյութերով:*

*The issue of education has always been one of the most important concerns of society, as it serves as a vital tool for building the future. In this article, we will explore the topic of education from a historical perspective, focusing on its representation in materials published in the magazine* Bazmavep. *Since* Bazmavep *is one of the most prominent magazines in Armenian culture, we will limit our analysis to printed materials from the 1840s.*

***Բանալի բառեր՝*** Դաստիարակություն, Բազմավէպ, ամսագիր, մանկավարժություն, մարտահրավերներ, խնդիրներ, հասարակություն:

---

* *Հոդվածը ներկայացվել է 21.02.2025, գրախոսվել է 13.04.2025, ընդունվել է տպագրության 23.06.2025:*
*The article was submitted on 21.10.2024, reviewed on 13.04.2025 accepted for publication on 23.06.2025.*

***Ինչպես հղել***՝ Հովակիմյան, Հ. (2025), Դաստիարակության խնդիրը «Բազմավէպ» ամսագրում (1840-ական թվականներ), *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, *1*(5), 141-153.
https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-125

***How to cite (APA style):*** Hovakimyan, H. (2025), "The Issue of Education in *Bazmavep* Journal (1840s)", *Herald of the Armenian Library Association*, *1*(5), 141-153. https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-141

***Ներածություն***

«Բազմավէպ»-ը հայ մամուլի պատմության ամենաերկարակյաց պարբերականներից է: Այն հիմնադրվել է 1843 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Հ. Գաբրիել Այվազովսկու ջանքերով: 1843 թ. առաջին իսկ համարում տեղադրվում է ծանուցում, ուր ասվում է, որ թեև հունվարի փոխարեն մայիսից է հրատարակվում պարբերականը, բայց նախատեսված բոլոր քսանչորս համարները մինչ տարեվերջ հրատարակվելու են: Սկզբնապես նախատեսվել էր ամսագիրը հրատարակել երեք տարի, սակայն հաշվի առնելով հետագայում ընթերցողների՝ պարբերականի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը, ֆինանսական միջոցների առկայությունը, ինչպես նաև միաբանության անդամների և հետագա տարիների խմբագիրների մտավոր ներուժը, ամսագրի տպագրությունը շարունակվում է առ այսօր:

«Բազմավէպ»-ն, իր վերտառությանը համահունչ («Օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց»), ուսուցանում, տեղեկացնում, կրթում ու լուսավորում էր հանրությանը: Տարբեր ժամանակներում հայերեն բազմաթիվ պարբերականներում երևում էին այս ամսագրից արված քաղվածքներ: Շատ դեպքերում վերատպվում էին «Բազմավէպ»-ից վերցրած ամբողջական հոդվածներ ու հոդվածաշարեր: Ծավալվում էին քննարկումներ, մեթոդական նյութերը, որպես ուղեցույցներ, օգտագործվում էին մի շարք կրթական հաստատություններում: Այս առումով անուրանալի բարձր և հեղինակավոր

դեր ուներ պարբերականը: Բոլոր խմբագիրներն անխտիր ժամանակին համահունչ լուսավոր և ուսուցանող գաղափարներ էին տարածում և շարունակում են այս առաքելությունն առ այսօր:

Սկզբնական շրջանում՝ 1843-1848 թթ. պարբերականը բաղկացած էր երեք բաժիններից, ինչի մասին խմբագիրը հայտնում էր. «Ուստի աս մեր օրագրին մեջ, որ առ այժմ տասնըհինգ օրը մէյմը կըտպուի, ընդհանրապէս Բնական՝ Տնտեսական եւ Բանասիրական գիտելեաց վրայ կըխօսինք» (Յառաջաբան, Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 1, էջ 4)[1]: Այս երեք բաժիններն իրենց հերթին ունեին ենթաբաժիններ, օրինակ՝ «Բնական գիտություն»-ը բաղկացած էր «Աստղաբաշխութիւն», «Բնաբանութիւն», «Բնալուծութիւն», «Երկրաբանութիւն» և «Բնական պատմութիւն» ենթաբաժիններից: «Տնտեսական գիտութիւն»-ը՝ «Դաստիարակութիւն», «Առողջութիւն», «Քաղաքական տնտեսութիւն», «Երկրագիտութիւն», «Արուեստ» ենթաբաժիններից, «Բանասիրական տեղեկութիւն»-ը՝ «Պատմութիւն», «Աշխարհագրութիւն», «Ազգային տեղեկութիւն», «Բարոյական խրատ, պատմութիւն», «Բանաստեղծութիւն: Առակ» ենթաբաժիններից:

Դաստիարակության խնդրին առնչվող հոդվածներն առաջին տարիներին ընդգրկվում էին տնտեսական բաժնում: 1846 թ., երբ վերանայվում է պարբերականի կառուցվածքը, երեք բաժնի փոխարեն նյութերը տեղադրվում են չորս բաժնով, այն է՝ «Բարոյական», «Բանասիրական տեղեկութիւն», «Տնտեսական գիտութիւն», «Բնական գիտութիւն»: «Դաստիարակութիւն» ենթաբաժինը այս բաժանմամբ ընդգրկվում է «Բարոյական» բաժնում, որն ավելի տրամաբանական է:

[1] Բոլոր մեջբերումները «Բազմավէպ» հանդեսից են, այդ պատճառով նշում ենք տեքստում, ոչ թե օգտագործված գրականության ցանկում:

***Դաստիարակությանը վերաբերող հոդածները «Բազմավէպ» ամսագրում***

Դաստիարակության թեման «Բազմավէպ»-ի հիմնադրման առաջին իսկ տարում՝ 1843 թ., դառնում է առաջնահերթ քննարկման առարկա: Ամսագրի ամենավաղ հրապարակումներից մեկը վերնագրված է «Տղաքը դպրատուն խրկելուն օգուտը» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 2, էջ 24-26), որի հեղինակն է Հայր Եփրեմ Գամասարյանը: Նա դաստիարակությունը բնորոշում է որպես ազգի երջանկության հիմնայուն՝ շեշտելով. «Առանց ասոր ո՛չ բարեպաշտութիւն կունենայ ազգը, ո՛չ մարդավարութիւն, և ո՛չ գիտութիւն»:

Հեղինակը մատնանշում է երեխաների ուսուցման և դաստիարակության երեք հիմնական ուղիներ՝ ընտանիքում ծնողների միջոցով ուսուցում, տանը մասնավոր ուսուցիչ հրավիրելը և դպրոց ուղարկելը՝ եզրակացնելով, որ արդյունավետը դպրոցն է:

Թեման շարունակվում է հետագա համարներում: «Թէ որչափ հարկաւոր է կրթութիւնը մեր ազգին տղոցը» վերնագրով հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 4, էջ 57-59) կրկին բարձրաձայնվում է կրթության խնդիրը՝ կրթության բացակայությունը ներկայացվելով որպես ազգային դժբախտությունների արմատական պատճառ: Այս տեսակետը շարունակվում է Հայր Պետրոս վրդ. Մինասյանի հոդվածում «Թէ տղոց առաջին դաստիարակը ով պիտի ըլլայ» հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 5, էջ 70), որտեղ նա բացահայտ քննադատում է ծնողների վարքագիծը: Ըստ Մինասյանի՝ ընտանիքի ներսում երեխաները վաղ տարիքից ձեռք են բերում վատ սովորություններ, որոնք հետագայում դառնում են խնդիր մանկավարժների համար:

Թեման առավել խորությամբ ներկայացվում է «Ճշմարիտ որդեսիրութիւնը ինչպէս պիտի երևնայ դաստիարակութեան մէջ» վեր-

նագրով հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 8, էջ 117–119), որտեղ դաստիարակի գործը համեմատվում է պարտիզպանի աշխատանքի հետ: Հեղինակը պատկերավոր նկարագրում է պարտիզպանի՝ ծաղիկների խնամքի գործը՝ ընդգծելով, ավելի մեծ ջանք ու հոգածություն է պահանջվում մարդկային հոգու ձևավորման գործում: Միաժամանակ ընդգծվում է օրինակելի վարքագծի դերը. միայն խոսքով դաստիարակելը բավարար չէ. երեխային անհրաժեշտ է ուղղորդել նաև օրինակով՝ հատկապես ծնողների և դաստիարակների վարքով. «Խօսքով խրատելէն առաջ գործքով պէտք է խրատել… երբոր տեսնէ որ իրենց տուած խրատին իրենք չեն հետևիր, կըսկսի տարակուսիլ ու մոլորիլ» (նույն տեղը):

Նշենք, որ ամսագրում այս թեմայով տեղ գտած բազմաթիվ հոդվածներ անստորագիր են: Հետագայում լույս տեսած մատենագիտական ցանկերն օգնում են վերականգնել այս նյութերի հեղինակների ինքնությունը, ինչն էլ ավելի մեծ արժեք է հաղորդում տվյալ հոդվածին, քանի որ նրանք բոլորը տվյալ ժամանակաշրջանի մտավորականներն են:

Նրանց թվում նշանակալի տեղ է գրավում Հայր Համազասպ Թերճիմանյանը: Նրա բազմաթիվ հոդվածները կրում են թե՛ տեսական խորություն, թե՛ գործնական հղումներ՝ ուղղված ինչպես ծնողներին, այնպես էլ ուսուցիչներին: Թերճիմանյանը հանդես է գալիս որպես ամբողջական մանկավարժական համակարգի ջատագով՝ կրթությունն ընկալելով որպես շարունակական ու փուլային գործընթաց, որը պետք է սկսվի երեխայի կյանքի սկզբից: Նրա կողմից հրապարակված հոդվածներից են «Թէ որքան կանուխ պէտք է սկսիլ տղոց կրթութիւնը», «Թէ ինչպէս պէտք է տղոց հեգել սորվեցընել», «Որն է առաջին հոգը որ ծնողք պիտի ունենան նոր ծնած տղուն վրայ», «Բարոյական դաստիարակութեան մէջ եղած սխալմունքնե-

րուն վրայ, և թէ ինչ կերպով անոնց առաջը առնելու է», «Այլ և այլ բնաւորութիւն ունեցող տղոց հետ պետք չէ նոյն ոճով վարուիլ», «Ի՞նչպէս պէտք է կրթել տղաքը աստուածապաշտութեան մէջ» և այլն: Այս նյութերն ընդգրկում են դաստիարակության ամբողջական ոլորտը՝ սկսած ֆիզիկական խնամքից մինչև բարոյահոգեբանական զարգացման մանրակրկիտ ցուցումներ:

«Թէ որքան կանուխ պէտք է սկսիլ տղոց կրթութիւնը» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 11, էջ 166) հոդվածում հեղինակը շեշտում է, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսվի կյանքի առաջին օրերից՝ նախքան ի հայտ կգան ակնհայտ «սովորությունները»: Նրա խոսքով՝ նորածինը մոր դեմքին ժպտալով՝ ցույց է տալիս, որ զգայությունները սկսում են ձևավորվել, ինչը հենց այն սահմանագիծն է, երբ ծնողը կարող է իր վարքով կառավարել երեխայի զգացմունքները: Նա նկարագրում է, թե ինչպես պետք է օգտագործել նման պահերը՝ կամ ժպիտով «վարձատրել» ցանկալի վարքը, կամ խիստ հայացքով՝ «պատժել» անցանկալին՝ դրանով իսկ երեխայի մեջ ձևավորելով բարոյական ընկալման հիմքերը: Հայր Թերճիմանյանը խիստ քննադատության է ենթարկում այն պատկերացումը, թե մինչև յոթ տարեկան երեխան պետք է մնա կրթությունից զերծ: Նա դիտարկում է ծնողների հակվածությունը՝ կա՛մ ամբողջությամբ բավարարել երեխայի ցանկությունները (հարուստ ընտանիքներում), կա՛մ անտեսել նրան՝ թողնելով ինքնաբուխ խաղի և պատահական միջավայրի ազդեցության ներքո (աղքատ ընտանիքներում): Երկու դեպքում էլ, ըստ հեղինակի, բացակայում է ակտիվ, նպատակային դաստիարակությունը, ինչի հետևանքով երեխան մնում է իր «կիրքերի» իշխանության տակ, որոնք մեծանալով՝ վերածվում են վարքային շեղումների: Հեղինակն ընդգծում է. «…չեն մտածեր որ տղան ալ իրեն հա-

մար կիրքեր ունի՝ իր պզտիկութեանը համեմատ, որ հետը կըմեծնան օրէ օր» (Նույն տեղը):

«Որն է առաջին հոգը որ ծնողք պիտի ունենան նոր ծնած տղուն վրա» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 12, էջ 181) հոդվածում Թերճիմանյանը կարևորում է նորածնի առողջության ապահովման պայմանները՝ դրանք դիտելով որպես հոգեբանական հավասարակշռության և բարոյական դաստիարակության հիմք: Ըստ նրա՝ երեխայի ֆիզիկական խնամքն առաջին աստիճանն է, որի անտեսումը հանգեցնում է ինչպես մարմնական, այնպես էլ մտավոր թուլության: Նա մանրամասն քննարկում է երեխայի օրորոցային խնամքի տարրերը՝ նշելով, որ չափազանց սեղմ կապանքները կարող են խոչընդոտել արյան բնականոն շրջանառությունը, իսկ օրորոցի սաստիկ շարժումը վնասակար է գլխուղեղի համար: Հեղինակի պատկերացմամբ՝ առողջ մարմինը կայուն հոգու զարգացման նախապայմանն է:

Այս շարքի հաջորդ՝ «Որն է երկրորդ խնամքը…» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 13, էջ 198) հոդվածում քննարկվում է երեխայի մտավոր ու բարոյական զգայությունների ձևավորման փուլը: Հեղինակը նկատում է, որ դեռևս խոսել չկարողացող երեխան սկսում է հաղորդակցվել շարժումների, դեմքի արտահայտությունների միջոցով՝ պահանջելով ուշադրություն: Այս փուլում ծնողները պետք է ուշադիր լինեն երեխայի սովորությունների նկատմամբ, քանի որ դրական և բացասական վարքագծերը արմատավորվում են հենց այդ շրջանում: Հոդվածում ընդգծվում է ծնողական օրինակի դերը երեխայի բարոյական կողմնորոշման գործում, իսկ դաստիարակության արդյունքը, ըստ Թերճիմանյանի, պիտի լինի ծնողի առաքինության փոխանցումը որպես ժառանգություն:

«Երբոր տղայ մը լեզու կելլե, ինչ խնամք ընելու է վրան» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 14, էջ 213) հոդվածում շեշտը դրվում

է խոսքի զարգացման շրջանում ծնողների պատասխանատվության վրա: Թերճիմանյանը հորդորում է բացառել երեխայի ներկայությամբ անհամեստ լեզու, հայհոյանք, բամբասանք և բարոյական կերպարները խաթարող խոսակցությունները: Ըստ նրա՝ երեխան ընդօրինակում է մեծերին ոչ միայն բառացիորեն, այլև բարոյական վարքագծի մակարդակով: Այսպիսով, ընտանիքում հաստատված խոսքի և վարվեցողության մաքրությունն է մանկության բարոյական հիմքի գրավականը:

Դաստիարակության հաջորդ փուլը կապված է կրթության կազմակերպման հետ՝ ըստ երեխայի անհատական առանձնահատկությունների: «Տղոց կրթութեանը համար հարկաւոր գիտելիքներ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 2, էջ 22) հոդվածում շեշտվում է, որ կրթության նպատակը ոչ թե հիշողության, երևակայության կամ դատողության տրամադրումն է, այլ արդեն առկա կարողությունների զարգացումն ու համակարգումը: Կարևորվում է անհատական և տարբերակված մոտեցումը՝ հաշվի առնելով ոչ միայն երեխայի, այլև ազգի, վայրի, բնավորության առանձնահատկությունները: Մատնանշվում է ուսուցման բովանդակության ու մեթոդի համապատասխանեցումը երեխայի մտավոր զարգացման մակարդակին: Օրինակ, բնական գիտությունների ուսուցումը՝ ուղեկցված պատկերներով ու առարկայական ցուցադրությամբ, դիտվում է արդյունավետ, մինչդեռ տրամաբանության նման վերացական ուսումնական առարկաները՝ անարդյունավետ փոքր տարիքում:

Հաջորդ հոդվածում՝ «Որչափ հարկաւոր է տղոց սորվելիքը իրենց համար պարզ ու դիւրիմաց ու զուարճալի ըլլայ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 7, էջ 104), ներկայացվում է մանկավարժական մեթոդաբանության կարևոր սկզբունքը՝ ուսուցումը դարձնել հաճելի,

խաղային տարրերով հագեցած, որպեսզի սովորելը չդիտվի որպես տանջանք, այլ դառնա սիրելի ու խթանող գործընթաց:

«Բազմավեպի» քաղաքականությունն էր ընթերցողին ներկայացնել ժամանակի ամենաառաջադեմ և օգտակար գաղափարները՝ նպաստելով հասարակության բարեփոխմանն ու առաջընթացին: Հոդվածագիրները քննադատում էին հնացած կրթական մեթոդներն ու հասարակության արատավոր երևույթները՝ հանդես գալով բարեկամական, առաջարկող և ուղղիչ դիրքերից:

«Թէ ինչպէս պէտք է տղոց գիր ճանչնալը սորվեցընել» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 11, էջ 165) և «Թէ ինչպէս պէտք է տղոց հեգել սորվեցընել» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 14, էջ 213) հոդվածներում քննադատվում են արևելյան կրթական հաստատություններում կիրառվող մեթոդները և առաջարկվում են նորարար, արդյունավետ ուսուցման եղանակներ:

Կարևոր բաղադրիչ է դիտարկվում նաև ֆիզիկական դաստիարակությունը: «Մանր տղոց մարմնոյն վրայ ընելու խնամքները» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 16, էջ 245) հոդվածում Հայր Բառնաբաս Եսայանը շեշտում է երեխայի մարմնի զարգացման, սննդի, հագուկապի և շարժուն կյանքի անհրաժեշտությունը՝ հիմնվելով ժամանակի բժշկական և մանկավարժական փորձի վրա: Հեղինակն ընդգծում է բացօթյա պայմաններում ֆիզիկական դիմադրողականության ձևավորման անհրաժեշտությունը՝ որպես ապագա կյանքի դժվարություններին դիմակայելու նախադրյալ:

Դաստիարակության գործընթացում առանցքային է նաև մանկավարժի անձնավորությունը: Թերճիմանյանն ընդգծում է, որ ծնողները նախընտրում են բարոյապես կայուն, խղճմտանք ունեցող, պարտաճանաչ և օրինակելի մանկավարժների (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 22, էջ 340): Լավ մանկավարժը պետք է գործի ոչ թե

անձնական շահից, այլ՝ կրթված, բարեպաշտ և հոգեպես առողջ սերունդ ձևավորելու նպատակով:

«Բազմավէպի» խմբագրակազմի հիմնական տեսլականը բարոյապես առողջ, կրթված և կիրթ սերնդի ձևավորումն էր, ինչը պայմանավորեց նաև պարբերականի մանկավարժական ուղղվածությունը: «Բարոյական դաստիարակութեան մէջ եղած սխալմունքներուն վրայ, և թէ ինչ կերպով անոնց առաջը առնելու է» հոդվածաշարում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 3, էջ 39; թ. 4, էջ 56) հեղինակը քննադատում է դաստիարակության տարածված սխալները՝ ընդգծելով դրանց կործանարար ազդեցությունը: Սխալ մոտեցումների թվում առանձնացվում են չար օրինակն, անխոհեմ դրսևորումները, անհամբերությունը, կողմնապահությունը, կոպտությունն ու ձևական խստությունը: Հեղինակն առաջարկում է կոնկրետ այլընտրանքային լուծումներ՝ խրախուսման, պարգևների և պատժի ձևերով: Փոխանակ երեխաներին խրախուսելու նյութական ու գայթակղիչ միջոցներով (հագուստ, քաղցրավենիք), առաջարկվում է ճաշակով ընտրված գրքեր տալ, որոնք ունեն կրթական և բարոյական ազդեցություն: Պատժի հարցում ևս հոդվածագիրը հանդես է գալիս ժամանակին նորարարական դիրքորոշմամբ՝ մերժելով մարմնական պատիժները՝ իբրև անհատականության վրա վնասակար ազդեցություն ունեցող գործիք, և ընդգծում երեխայի ինքնագիտակցված վերափոխման անհրաժեշտությունը:

Մեկ այլ հոդվածում՝ «Այլ և այլ բնավորութիւն ունեցող տղոց հետ պէտք չէ նոյն ոճով վարուիլ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 6, էջ 103), ներկայացվում է անհատական մոտեցման անհրաժեշտությունը դաստիարակության գործընթացում: Ըստ հեղինակի՝ յուրաքանչյուր երեխա ունի յուրահատուկ բնավորություն, ուստի դաստիարակի գործը ոչ միայն հարմարեցնելն է մեթոդները տվյալ բնավորու-

թյանը, այլև նպաստել նրա դրական ձևավորմանը: Հեղինակն առաջարկում է խառն ոճ՝ միավորելով մեղմությունն ու պահանջկոտությունը:

Դաստիարակության գործընթացում առանձնացվում է երեք հիմնական միջավայր՝ ընտանիք, դպրոց և հասարակություն, որոնցից յուրաքանչյուրը համարվում է կարևոր առանցք՝ առանց առաջնահերթության հստակ դասակարգման: Հոդվածագիրները, սակայն, շեշտադրում են հատկապես ընտանիքը:

Հայր Ղևոնդ Մարգարյանի «Թէ ով է տղոց ամենէն սիրելի, զօրաւոր ու հարկաւոր վարպետը» հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 11, էջ 165) ներկայացվում է այն միտքը, որ երեխայի սկզբնական դաստիարակության համար բացառիկ դեր ունեն ծնողները, մանավանդ մայրը: Երեխայի բնավորության հիմքը դրվում է վաղ տարիքում, և եթե այդ փուլը դաստիարակչական սխալներով է անցնում, ապա հետագայում կրթական միջամտությունները հաճախ լինում են անարդյունավետ: Ըստ հոդվածագրի, ծնողի՝ հատկապես մոր պարտականությունն է բարոյական սկզբունքների և հասարակական պատասխանատվության գաղափարների արմատավորումը:

Թերճիմանյանի «Որ առաքինութիւնները պիտի տպավորէ դաստիարակը տղոց միտքը...» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 14, էջ 213) հոդվածում դաստիարակությունը դիտվում է որպես արժեքային կրթություն: Նշվում են կարևորագույն առաքինությունները՝ եղբայրասիրություն, արդարամտություն, ճշմարտասիրություն, ներողամտություն, համեստություն, ժուժկալություն և այլն: Յուրաքանչյուր առաքինություն ներկայացվում է կիրառական դաստիարակչական ցուցումով՝ շեշտադրելով դաստիարակի օրինակի ուժը և մանկավարժական միջամտության ձևերը:

Պարբերականը կարևորում է նաև հասարակության դերը դաստիարակչական գործընթացում: «Թէ ինչպէս պէտք է կարդալ դաստիարակութեան վրայ գրուած բաները» հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1846, թ. 7, էջ 97), արտահայտվում է մտահոգություն՝ կապված հանրության անտարբերության հետ: Հեղինակները կոչ են անում ընթերցել, ընկալել և գործնականում կիրառել դաստիարակության վերաբերյալ հրապարակված գաղափարները՝ ընդգծելով դաստիարակության և ազգային առաջընթացի անքակտելի կապը:

Ամսագրի էջերում թեման շարունակաբար նոր շերտեր է բացահայտում նաև հետագա տարիներին: Հեղինակներն անձանձիր ուսուցանում, բացատրում, մեկնաբանում են տարբեր երևույթներ, ներկայացնում նրանց առանձնահատկությունները, խնդրի հաղթահարման ճանապարհներ մատնանշում:

***ԱՄՓՈՓՈՒՄ***

«Բազմավէպ» հանդեսը, լինելով հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականներից մեկը, ունեցել է բացառիկ դերը հայ հասարակության կրթական, հոգևոր և մշակութային զարգացման գործընթացում: Մխիթարյան հայրերը՝ հանդեսի հոդվածագիրները, ժամանակի առաջադեմ գաղափարներով ոգեշնչված, իրենց անշահախնդիր գործունեությամբ ձգտում էին դաստիարակել լուսավորյալ, բարոյական արժեքներով օժտված քաղաքացի: Նրանք հատկապես կարևորում էին մատաղ սերնդի դաստիարակությունը՝ դա դիտելով որպես ազգային առաջընթացի հիմնաքար: Գործելով զարթոնքի շրջանի ներսում՝ հանդեսի հեղինակները միաժամանակ և՛ մասնակիցն էին այդ վերելքի, և՛ գաղափարական առաջնորդներ: Նրանց աշխատանքը խարսխված էր լուսավորական արժեքների վրա, սակայն զերծ էր արմատախիլ անելու ավանդույթը՝ ապահովելով ազգային ինքնության պահպանումը դաստիարակության գործընթա-

ցում: Այսօր, երբ անդրադառնում ենք «Բազմավէպի» էջերում արտահայտված գաղափարներին, վստահորեն կարող ենք պնդել, որ դրանք ոչ միայն ժամանակի արտացոլանք են, այլև վերարժևորման և կիրառման արժանի ուղղորդումներ՝ դաստիարակության արդի օրակարգի համար:

## THE ISSUE OF EDUCATION IN BAZMAVEP JOURNAL

**HOVAKIM HOVAKIMYAN**
***Khnko Aper National Children's Library***

***Keywords:*** Education, Bazmavep, Periodical, Pedagogy, Challenges, Issues, Society.

The Bazmavep journal, as one of the longest-running periodicals in the history of Armenian press, has played an exceptional role in the educational, spiritual, and cultural development of Armenian society. The Mekhitarist fathers-authors of the journal's articles - inspired by the progressive ideas of their time, sought through their selfless efforts to educate enlightened citizens endowed with moral values. They placed particular emphasis on the upbringing of the younger generation, viewing it as the cornerstone of national progress. Operating within the era of national revival, the journal's authors were not only active participants in this renaissance but also its ideological leaders. Their work was grounded in the values of the Enlightenment, yet it did not seek to uproot tradition, thus ensuring the preservation of national identity within the educational process. Today, as we revisit the ideas expressed in the pages of *Bazmavep*, we can confidently assert that they are not merely reflections of their time, but also valuable guidelines worthy of reassessment and application within the contemporary discourse on education.